16.05.24 - 16.05.24
12:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Մայիսի 16-ին՝ ժամը 12:00-ից, սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու **«ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ին**՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին։

«ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ն ընձեռում է բացառիկ հնարավորություն՝ մեկ հարկի տակ հավաքելով դիմորդներին, ուսանողներին, շրջանավարտներին, համալսարանական ստորաբաժանումներին և գործատուներին։ «ԲանՈՒԳործ»-ի շրջանակում դիմորդները հնարավորություն կունենան ծանոթանալու մրցունակ կրթական ծրագրերին, ուսանողները՝ հանդիպելու իրենց ապագա գործատուներին, իսկ գործատուները՝ ներկայացնելու իրենց գործունեությունն ու ընձեռած աշխատանքային հնարավորությունները։

Տոնական միջոցառման շրջանակում կազմակերպվելու են՝

Կարիերայի տոնավաճառ

Կարիերայի տոնավաճառի շրջանակում հայաստանյան ավելի քան 45 լավագույն կազմակերպություններ ***բանկային, կապի, սպասարկման, արտադրական, կրիպտոարժույթների, արդյունաբերական, միջազգային զարգացման, պետական, մշակութային, գիտահետազոտական*** *ոլորտներից այցելուներին կներկայացնեն առկա աշխատանքային հնարավորությունները, կանցկացնեն հարցազրույցներ, կկազմակերպեն մրցույթներ, կհամալրեն իրենց աշխատակազմերը և կխոսեն ձեռքբերումներից։*

Կրթության տոնավաճառ

- *ԵՊՀ ֆակուլտետները, ինստիտուտներն ու կենտրոնները, ինչպես նաև ԵՊՀ ՍԹԵՄ ավագ դպրոցը կներկայացնեն իրենց կրթական ծառայությունները։*
- *ԵՊՀ մի շարք ստորաբաժանումներ կներկայացնեն լրացուցիչ կրթության, փորձնակության և կամավորական աշխատանքի ծրագրերը, կկազմակերպեն*

վիկտորինաներ, մրցույթներ։
- *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կներկայացնի իր կրթական ծառայությունները և կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը։*
- *ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը կկազմակերպի «ԵՊՀ-105» խորագրով* իմպրովիզացիոն էտյուդի, լուսանկարչական, նկարչության, երգի *և* պարի *մրցույթներ։*

Բանախոսություններ գործի մասին

- *Տարբեր ոլորտների անվանի և հաջողության հասած անհատներ կներկայացնեն բանախոսություններ, կպատմեն իրենց փորձի, կրթական և աշխատանքային անցած ճանապարհի մասին։*
- *Առանձին հանդիպում կկազմակերպվի գրականության և գրահրատարակչության ոլորտների ներկայացուցիչների հետ։*
- *Ուսանողներին հնարավորություն կտրվի մասնակցելու «Fish bowl» քննարկմանը և խոսելու կրթական գործընթացում իրենց մոտիվացնող և դեմոտիվացնող գործոնների մասին։*

Միջոցառումը կեզրափակվի տոնական համերգով, որի ընթացքում ելույթ կունենան ԵՊՀ երգչախումբը, պարի համույթը, «YSU» և «By The Way» բենդերը և երգչուհի Սրբուկը։ Համերգի ժամանակ կհայտարարվեն մշակութային մրցույթների և «ԵՊՀ տարվա լավագույն ուսանող» մրցույթի արդյունքները։

Կոնտակտային տվյալներ

Աշակերտական այցերին առնչվող հարցերի դեպքում դիմել ԵՊՀ ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն
Հեռ.՝ (+374 10) 554 003, (+374 60) 710 133

Հաղորդակցական հարցերի դեպքում դիմել ԵՊՀ մարքեթինգի բաժին
Հեռ.՝ (+374 60) 710 141

Որպես գործընկեր մասնակցելու համար դիմել ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոն
Հեռ.՝ (+374 99) 419 879
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am